

**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

ԵԱԿԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչին

**Վրաստանում ՏՏ արձակարգի և լիազոր
դեմոնանին**



ԼԿՏ ներկայացուցիչներին

Կարելորդով միջազգային չափանիշներով կրթություն ջամբելու նրանց առաքելությունը՝ Նորին Սրբությունը համալսարանին արդյունավետ գործակցություն մաղթեց Հայաստանի բուհերի հեն՝ ընդգծելով, որ համատեղ ծրագրերը կրթական նոր հնարավորություններ կբացեն հայ ուսանողների համար, ինչպես նաեւ կկապառեն երկու երկրների հարաբերությունների առաջին ստեղծագավոր:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց 27 Նոյեմբերի ՀՀ-ում Սիրիայի նորանշանակ ղեկավարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մուհամմադ Ահմադ Հաջ Իբրահիմին:

Նորին Սրբությունն իր բարեմաղթանքներն ուղղեց պրն դեսպանին նշանակման առիթով և ցանկացավ արդյունավետ առաքելություն՝ ի նպաստ երկու ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերությունների և գործակցության շարունակական ամրապնդման: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց հայ-սիրիական պատմական կապերի մասին՝ ընդգծելով հայ համայնքի կարեւոր դերակատարությունը դրանց զորացման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ դեսպանը քննարկեցին Սիրիայում տիրող կացությունը, անդրադարձան հակամարտության հետեւանքով արձանագրված ցավալի կորուստներին և պատճառված ավերածություններին: Վեհափառ Հայրապետը մասնավոր մտահոգություն արտահայտեց Սիրիայի ժողովրդի, այդ թվում՝ հայ համայնքի կրած տառապանքների ու դժվարությունների առիթով, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքում քրիստոնեական ներկայության նվազման կապակցությամբ:

Գարեգին Բ Հայրապետն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին շարունակելու է իր գորակցությունը բերել Սիրիայի ժողովրդին, տեղեկացրեց, որ այս առնչությամբ Մայր Աթոռը մշտական կապի

մեջ է համասկոսի հայոց թեմի առաջնորդի և քույր Եկեղեցիների առաջնորդների հետ և ամեն ջանք ի գործ է դնում՝ միջեկեղեցական հանդիպումներին և տարբեր այլ հարթակներում միջազգային հանրության ուշադրությանը բերելու Մերձավոր Արեւելքի խնդիրները և նպաստելու հակամարտության հանգուցալուծմանը:

Նորին Սրբությունը դեսպանին նաեւ հայտնեց Հայաստանում հաստատված սիրիահայերին Մայր Աթոռի կողմից ցուցաբերվող հոգեւոր և նյութական աջակցության մասին:

Դեսպան Մուհամմադ Ահմադ Հաջ Իբրահիմն իր հերթին շնորհակալություն հայտնեց դժվարին այս ժամանակաշրջանում Սիրիային ցուցաբերվող գորակցության համար: Դեսպանն առկա մարտահրավերների հաղթահարման գործում կարեւորեց սիրիահայ համայնքի դերը, որը մշտապես մեծ հարգանք է վայելել երկրում:

Դեսպանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադի և Սիրիայի գլխավոր մուֆթի Ահմադ Բադր Ալ-Հին Հասունի ողջույններն ու բարեմաղթանքները:

Աղոթելով Սիրիայում խաղաղության վերահաստատման համար՝ Վեհափառ Հայրապետը հայցեց Բարձրալի իզվա-նին և պաշտպանությունը Սիրիայի բարեսեր ժողովրդին և մաղթեց, որ երկրում սկսված վերականգնողական աշխատանքների արդյունքում ամենքը շուտով կարողանան վերադառնալ իրենց բնակության վայրերը:

ՀՀ-ում առաքելությունն ավարտող Ռումինիայի ղեկավարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտող Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպան Սորին Վասիլիեն:

Գարեգին Բ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ երկու ժողովուրդների միջեւ առկա դարավոր ջերմ հարաբերություններն այսօր շարունակում են զարգանալ և պտղաբերել: Նորին Սրբությունը գոհունակությամբ հաստատեց, որ պատմության ընթացքում ռումինահայ համայնքն իր կարեւոր ներդրումն է ունեցել Ռումինիայի կյանքի տարբեր ոլորտներում և այսօր էլ ամբողջապես ներգրավված է երկրի կյանքում:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ առանձնակի ջերմությամբ է հիշում Ռումինիա կատարած իր հովվապետական այցերը:

Դեսպան Սորին Վասիլեն եւս Նորին Սրբությանը փոխանցեց Հայաստանում պաշտոնավարման ընթացքում ստացած իր ջերմ տպավորությունները: Դեսպանը մասնավոր անդրադարձ կատարեց Մայր Աթոռի հետ ունեցած սերտ գործակցությանը, ինչպես նաեւ խոսեց աշխարհասփյուռ հայ ժողովրդի միասնականության պահպանման գործում Հայ Եկեղեցու կարեւոր առաքելության մասին:

Վերջում, Աստծո օրհնությունը հայցելով երկու երկրների հարաբերությունների համար, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջողություններ մաղթեց դեսպանին՝ դիվանագիտական իր հետագա առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվեց 5-րդ մոտոհրաձգային կամավորական բրիգադի կազմավորման 25-ամյակը

Նոյեմբերի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, նշվեց 5-րդ մոտոհրաձգային կամավորական բրիգադի կազմավորման 25-ամյակը: Զորամիավորումը կազմավորվել է 1992 թվականի Նոյեմբերի 28-ին և մասնակցել արցախյան գոյամարտին:

Այս առիթով, ի նշանավորումն այս հոբելյանի, Միածնաէջ Մայր տաճարում կատարվեց Հանրապետական մաղթանք, որին ներկա էին Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արտակ Դավթյանը, Երկրապահ կամավորականների միու-

վճարվեց հերոսական հաղթանակին հասնելու համար: Ցավերով ու կորուստներով հանդերձ՝ մեր հոգին նորոգված է հաղթանակի բերկրանքով, մահվան դեմ հաղթանակի բերկրանքով: Մեր պատերազմը տակավին ավարտված չէ սակայն: Իրավ է ասված՝ կյանքը պայքար է: Այս մասին է խոսում Զրիստոս, որ ասում է. «Հուր եկա արձակելու երկրի վրա» (Խմտ. Դուկ. ԺԲ 49): Սա հուրն է սիրո՝ ընդդեմ ատելության, սա հուրն է խաղաղության՝ ընդդեմ պատերազմի, սա հուրն է համերաշխության՝ ընդդեմ խռովության և վերջապես սա հուրն է Կյանքի՝ ընդդեմ մահվան: Այս հուրը չի կարելի մարել, չի կարելի հրաժարվել այս հրից: Մեր ժողովուրդը պատմության իր խավարը ցրել է սիրո, համերաշխության, արդարության ու կյանքի այս հրով:

Տրվել պառակտման գայթակհությանը, փնտրել թշնամիներ յուրայինների մեջ, մերժել հեղինակություններին ու վարկաբեկել, կեղեքել, նվաստացնել ու անտեսել զրկվածներին նշանակում է շեղանել մեր կյանքի հուրը, մեր ճամփի լույսը:

Մեր ժողովրդի գավակներն իրենց կյանքը վճարեցին, որ մենք կյանք ունենանք, կյանքը վճարեցին, որ մենք ապրենք խաղաղ, ապրենք մեր ինքնության մեջ, խոսենք մեր լեզվով, ապրենք մեր հավատով, պահենք մեր ավանդույթներն ու կենսաոճը, նվիրվենք մեր հայրենիքին, Եկեղեցուն ու սրբազան արժեքներին: Այսպես պիտի ապրի Հայաստանը, եւ այսպես մահը պիտի հաղթահարի հայությունը»:



թյան նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանը, պետական ավագանու ներկայացուցիչներ, Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը, ԵԿՄ կենտրոնական վարչության անդամներ, 5-րդ բրիգադի կամավորականներ, երիտասարդ և պատանի երկրապահներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ ներկաներն աղոթեցին Հայոց աշխարհի խաղաղության ու ապահովության, հայրենի սահմանների անառիկության և քաջարի հայ զինվորի աննկուն ոգու համար: Հոգեւոր դասը նաեւ աղոթք բարձրացրեց արցախյան հերոսամարտի ընթացքում զոհված հայ մարտիկների հոգիների հանգստության համար:

Արարողության ընթացքում խոսք ասաց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ Եպս Խաչատրյանը:

«Այսօր բարձր նախագահությամբ և օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ամենքս համախմբվել ենք հայոց Սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ նշելու 25-րդ տարեդարձը հայոց բանակի հիմնասյուներից մեկը կազմող 5-րդ մոտոհրաձգային կամավորական բրիգադի, որը կազմավորվեց արցախյան ազատամարտի ու հայոց անկախության պայքարի մաքառումներում: Արցախյան ազատամարտը եւ հայոց անկախության հաստատումը ոչ այլ ինչ են, քեթ ոչ մահվան մերժում եւ կյանքի հաստատում: 5-րդ բրիգադի մարտիկների կյանքը ընծայաբերվեց նվիրական այս գաղափարների իրագործմանը:

Խոսել կամավորականների այս խմբի կազմավորման մասին նշանակում է վերապրել հայոց ազատագրական պայքարի հերոսական վերջին իրադարձությունները:

Հիշել 5-րդ բրիգադի կազմավորման մասին նշանակում է վերակենսավորել 90-ականների հաղթական ոգին, ոգի, որ չի ճանաչում վախ, ոգի, որ մերժում է մահը, վանում անվստահությունը, ոգի, որ ներշնչված է Աստծուց ու թրծված՝ Ավարայրի եւ Սարդարապատի հերոսամարտերում:

Մեր ժողովուրդն իր հոգում տակավին կրում է զրկանքների ու անգին կորուստների ցավը, որ



Շնորհավորելով ամենքին 5-րդ բրիգադի տարեդարձի առիթով՝ սրբազանը նաեւ իր խոնարհումը բերեց հայոց անկախության համար զոհված զինվորներին ու զորականներին:

Շնորհավորելով 5-րդ կամավորական բրիգադի հրամանատարին՝ Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանին՝ Արշակ Եպիսկոպոսն այնուհետ հրավիրեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ օրհնելու հայոց նվիրյալ մարտիկներին:



Պահպանիչ աղոթքով օրհնելով ներկաներին՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շնորհավորանքներն ուղղեց ամենքին: Հայոց Հայրապետը մաղթեց, որ հայոց բանակի կամավորականների արիությունն ու քաջությունը ներշնչանք լինեն ազգի բոլոր գավակների և ի մասնավորի՝ հայոց բանակի զինվորների համար, որպեսզի խաղաղության մեջ կերտվի հայրենի երկիրը, իրագործվեն հայ ժողովրդի դարավոր երազները, ապահովվի հայոց ազգի անվտանգ ու բաթոր կյանքը:

ՄԱՅՐ ԱԹՐԱՆ ԵՋՄԻԱԾՆԻ
ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐԱԿԱՆ

ԶԵՅՄԱ ՌԱՍՏԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 16-19, 21

Իսկ V դարի 40-ական թվերի վերջին սպարապետ Վարդան Մամիկոնյանը, իր երկու այլ նախարարների հետ, արդարացի ցատկով հաշվեհարդար տեսան հաղթանակով II-ի ուղարկված մոգապետ Վնդոյի եւ նրա գործակալ, ուրացող Շավասպ Արծրունու հետ. «Այս լուր դառնութեան եհաս առ մեծն Վարդան Մամիկոնեան, որ էր ամրացեալ ի Տաւրոսականն Չռայլ: Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանակոյր նեղութեանցն, եւ գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս եւ կործանման աշխարհիս հայոց /.../ եւ յանկարծօրէն յեղաւարծ առաջութեամբ հասին ի վերայ Շուասպայ եւ մարգապանին Վնդոյի: Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ եւ Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շուասպ Արծրունի, յորոյ վերայ կալեալ եւ կանչեալ քաջն Վարդան իբրեւ գառնիւծ, իբրեւ գկորին առիւծոյ, եւ առ ուժոյ եւ երագութեան ձեռնին ի վերայ ձգեալ զմիողնին՝ յերկուս կտրե զՇուասպայն»: Տաճատ եւ Վախրիճ նախարարները, ձերբակալելով մոգապետ Վնդոյին եւ նրա որդի Շիրոյին, տարան Դվին եւ Որմզդական մեհյանի կրակարանի թեժ բոցե-

րի վրա այրեցին (*Թովմա Արծրունի եւ Անանուն. Բ, Ա, էջ 89-90*): Իսկ Վարազվադանի վախճանի մասին Փարպեցին գրում է. «...բազմաժամանակեայ տանջեալ ի դիւժ ըստ յառաջագրելոցն՝ դառն մահուամբ սատակեցաւ չարաչար» (*Փարպ., Բ, Խ2, էջ 85*): Մի այլ առիթով եւ ցույց եմ տվել (*Ա.Մուշեղյան. Վարդանանց Պատմության հեղինակ Եղիշեն եւ նրա նոր անձնավորության բացահայտումը, «Էջմիածին» ամսագիր, թիվ 12, 2013, էջ 37-55*), որ Արտաշատի Որմզդական մեհյանի կործանման դրվագը մասն էր կազմում սպարապետ Վարդան Մամիկոնյանի ռազմագիտական այն խորաթափանց ծրագրի, որ նա կազմել էր Մոկաց աշխարհի Չռայլ ամրոցում՝ վերահաս գլխավոր ճակատամարտից առաջ հայոց բանակի թիկունքը ապահովելու նպատակով, որով նա ոչնչացրեց հայաստանի ավելի քան մեկ տասնյակ արքունական բերդերը բռնագավթած պարսից կայազորները, որտեղ պարսից զինվորներին սպասարկելու համար հիմնվել էին ատրուշաններ՝ դրանց սպասավորող մոգերի հետ միասին: Չռայլ ամրոցի հիշյալ գաղտնի խորհրդին մասնակից էր Եղիշեն դրան երեցը, եւ Թովմա Արծրուն-

նու վկայակոչած այս փաստն իր հաստատումն է գտնում հենց Եղիշեի Վարդանանց Պատմության մեջ. «Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն եւ աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին. տապալէին քանդելիս զբնակութիւնս նոցա: Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք. եւ առնուին զանմատոյց ամուրսն՝ զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս եւ զաւանս իւրեանց. գերկայնորդսն եւ զԱրխինն եւ զաւանս իւրեանց. զԲարձրաբողն, զԽորանիստն, զԾախանիստն, զանկասկածելի Ողականն, եւ ընդ նոսա եւ զաւանս իւրեանց. զԱրփանեալն, զՎանն աւան, ընդ նմին եւ զաւանս իւր. զԳռեալն (*ըստ իս՝ «Գռեալն» Թովմա Արծրունու եւ Անանունի հիշատակած Չռայլ կամ Չռել ամրոցն է, որ Եղիշեն նշում է անմիջապէս Վան բերդաքաղաքից հետո՝ կարծես ցույց տալով, որ այդ ամրոցը գտնվում էր Ոչտունիքին հարեան Մոկաց աշխարհում*) եւ զԿապոյտն, զՈրոտն եւ զԿաշակաշատն: /.../ Տապալէին քանդելիս զշինուածս նոցա, եւ այրեին կիզուին գտունս պաշտաման կրակի: Սրբէին զպղծութիւն կռապաշտութեանցն, եւ առնուին զկահ եւ



զկազմածս ատրուշանացն» (*Եղիշե, էջ 68-69*):

Թովմա Արծրունին հիմք է տալիս պնդելու, որ Ավարայրի ճակատամարտի նախօրէին նշանավոր հայոց բերդերի ազատագրումը պարսից զինված կազմերից եւ պիղծ ատրուշանների կործանումը ծրագրել եւ ղեկավարել է անձամբ զորավար Վարդան Մամիկոնյանը: Այդ բերդերը ազատագրելով՝ Վարդանը վերահաս Ավարայրից առաջ փաստորեն ապահովեց հայոց զորքի թիկունքը երկրով մեկ ցրված պարսից կայազորների սպառնալիքից, եւ դա վկայում է նրա ռազմագիտական հմտության մասին:

Այս բոլոր փաստերը մեկտեղելով՝ Ռասսելը գլխավոր է ներկայացնում պատմական իրողությունը, երբ IV-V դարերի առանձին ուրացող եւ դավաճան իշխանատեւնէ նախարարների շահամուլ, հաշվենկատ գործերով եւ իր սեփական նույնքան հաշվենկատ

նկրտումներով ձգտում է հիմնավորել իր փայփայած գաղափարը՝ նախասասանյան շրջանում իբր հայաստանում տիրող կրակապաշտությունը:

2.

Սակայն խնդիրը միայն հայ ժողովրդին վերագրվող կրակապաշտությունը չէ: Պարզվում է, որ պրոֆ. Ռասսելն այդ հավատը հայ ժողովրդին պարտադրելու դժվարին հանձնառությանը ձեռնամուխ է եղել այն հետին դիտավորությամբ, որ հայ ժողովրդին պարտադրի նաեւ անբարոյության, սեռական խառնակման, արյունապղծության եւ ինքնասիրտ բոլոր այն խայտառակ երեւոյթները, որոնց օրինակները նա հավաքել է իր աշխատության մեջ (*James R. Russell, էջ 50, 81 եւ հաջ., 235-243 եւ այլն*) փոյուզիական եւ ասորական, ոչ ավելի, ոչ պակաս, 6000-ամյա առասպելների գանազան փշրանքներից:

Շարունակությունը՝ էջ 5

ՎԻՆՅԱՄ ՄԱՐՈՅԱՆԻ ԵՐԿՐԻ ԱՇԽԱՐԻՆԵՐԸ

«Իմ մորական կողմի տատը՝ Լյուսի Ղարոլանյանը, ասել էր իմ մասին հետեւյալը՝ Նախքան տասնչորս տարեկան դառնալս. «Մեր Վիլին այս աշխարհից դուրս է ապրում»: Բայց ես դրա մասին գիտեի մինչեւ նրա ասելը: Ես լիովին պատրաստակամ էի ընդունել, որ դա խենթություն է, նույնիսկ լիակատար հիմարություն: Այդ ինքնամեկուսացած վիճակը կործանարար էր: Բայց եւ այնպէս ոչինչ չփոխվեց. ես իրող չեմ վստահում աշխարհին, մարդկային ցեղին: Ես օտարված եմ կրոնից, իրական կյանքից, տիեզերքից, ժամանակից, երկրից, անհայտից եւ բնությունից: Ես հանկարծակի զարմանք պատճառեցի բոլորին՝ մեկուսացնելով ինքս ինձ իմ շրջապատից: Սակայն ես վստահ էի, որ այդ ինքնամեկուսացումն անհրաժեշտ էր: Ես փորձում եմ պայքարել իմ անստության, խոցելիության եւ անազնվության դեմ, քանզի ես չեմ կարող չուլել ուրիշի թերությունները» (տե՛ս W. Saroyan, Obituaries, Berkeley, Calif.: Creative Art Books Company, 1979, էջ 330):

Այս դրվագը մեջբերված է Վիլյամ Սարոյանի «Մահախոսական» վերնագրված վերջին ինքնակենսագրականից: Վերջինս իրապես կարող է ծառայել որպէս գրողի կյանքի ու գործունեության վերջնախոսք: Իր ստեղծագործական կյանքի վերջին շրջանում Վիլյամ Սարոյանը մի տեսակ երեւում է երեւակայության եւ իրականության միջեւ: Շատերը հմայված են Սարոյանի կերպարով. նա միամիտ խռովարար է, խելահեղ հայ, տարօրինակ մարգարե, ով փորձում է ինչ-որ արտառոց

բան տեսնել տաղտկալի իրականության մեջ: Ոմանք տարակուսում են, երբ կարդում են Վիլյամ Սարոյանի չիմքագրված արձակը, որում հաճախ ասես բացակայում է տրամաբանական եզրահանգումը: Այս գրողին բնորոշ չափազանցությունները, բուն թեմայից շեղվելու նրա սովորությունը եւ գերհուզական ոճը նրան դարձրեցին գրականագետների քննադատության թիրախ: Երբեմն Սարոյանի գրվածքներն անվիճարկելիորեն հաջողված են, ինչպէս օրինակ՝ վաղ շրջանի գվարճալի պատմվածքները, որոնք, ըստ երեւոյթին, հանդիսանում են նրա լավագույն ընծան ամերիկյան գրականությանը: Բայց երբեմն Սարոյանի գրվածքները դառնում են մի տեսակ պարզունակ (իհարկէ, խոսքը չի վերաբերում գրողի հորդուն պիեսներին եւ ինքնակենսագրականներին): Իսկ երբեմն էլ ամերիկահայ գրողի երկերը դառնում են անտանելի: Ասվածը դպեցեք է զարմանք առաջացնի, քանզի չկան այնպիսի գրողներ, ովքեր մշտապես անթերի գործեր են ստեղծում: Ստեղծագործական գործընթացն առհասարակ իր բնույթով բավական բարդ է ու լարված: Ցանկացած ստեղծագործող մարդ անխուսափելիորեն ունենում է վերելքներ ու վայրէջքներ, հաջողություններ եւ ձախողումներ: Այսպէս է նաեւ Վիլյամ Սարոյանի դեպքում: Սակայն այս հոգվածում մենք ավելի շատ կկենտրոնանանք Սարոյանի ստեղծագործությունների դրական կողմերի վրա:

1930-ական թվականներին գրված «Հայաստանցի Անդրանիկը» էսսեի մեջ Սարոյան գրողը խոսում է այն մասին, թե ինչպիսի հուսա-



լքություն է ապրել հայ ժողովուրդը՝ դավաճանվելով արեւմտյան տերությունների կողմից: Նա գրել է նաեւ հայ հեղափոխականների նպատակների ու անցյալի պատճառած մշտական ցավի մասին: Այստեղ գրողը, իր սովորության համաձայն, համոզմունք է հայտնում, որ հայաստանը, ի վերջո, ազատվել է ազգային բեռից եւ անցյալի պատրանքներից: Անդրադառնալով հայաստան կատարած իր ուղեւորությանը՝ նա տեսակետ է հայտնում, որ այս երկիրը մի իդեալ է, որը ջնջում է ժամանակի եւ տարածության միջեւ եղած սահմանագծերը. «Այստեղի ողկույզներն այնպիսին են, ինչպիսին Կալիֆոռնիայի խաղողի ողկույզներն են: Հայաստանցի հայերի դեմքերը ճիշտ այնպիսին են, ինչպիսին Կալիֆոռնիայի հայերի դեմքերն են: Արաքս եւ Զուռ գետերը հոսում են հայաստանի արգասաբեր հովիտ-

ների միջով ճիշտ այնպէս, ինչպէս Քիկսս եւ Սան Դոնալդ գետերն են հոսում իմ ծննդավայրի հովտով: Իսկ հայաստանի արեւը ոչ պակաս ջերմ է ու բարի, քան Կալիֆոռնիայի արեւը» (տե՛ս W. Saroyan, «Antranik of Armenia», in the Saroyan Special, New York: Harcourt, Brace and Co., 1948, էջ 83):

Թեւեւ Վիլյամ Սարոյանն իսկապէս շատ է գրել հայերի մասին, սակայն նա, հեռանալով հարազատ ֆրեզկո քաղաքից, իր հայ հերոսներին ներկայացնում է ապագգային հանդերձանքով: Գրողը կարողանում է թաքցնել իր անխոհեմությունը, խոցելիությունը եւ խաբվածությունը՝ կիրառելով այնպիսի դիմանկարներ, որոնք սահմանակից են կարծրատիպերին:

Վիլյամ Սարոյանի տեսակետները հայրության վերաբերյալ շատ հայեցի են: 1951 թ. հրատա-

րակած «Ռոք Վահրամ» ինքնակենսագրական վեպում ամերիկահայ գրողն ասում է հետեւյալը. «Ցանկացած մարդու հայրն իրոք հրաշալի է: Յուրաքանչյուր մարդու ընտանիքն իսկապէս հիասքանչ է: Այս երկու ճշմարտություններն անվիճելի են» (տե՛ս W. Saroyan, «Rock Wagram», New York: Doubleday and Company, 1951, էջ 183): Բայց կյանքը վկայում, որ ամեն բան այնքան միանշանակ չէ, ինչպէս դա ներկայացնում է Վիլյամ Սարոյանը: Ինչպէս ասված է Մայքլ Արլեն Կրոտերի «Ուլեւորություն դեպի Արարատ» ինքնակենսագրական գրքում, նմանօրինակ վերաբերմունքն անուղղակիորեն համընդհանուր ջղացնում էր առաջացրել, այն ժամանակ, երբ հազարավոր հայեր նահատակվեցին եւ անպաշտպան թողեցին իրենց որդիներին: Վիլյամ Սարոյանի ընդգրկուն մեկնաբանություններն իր հոր մահվան վերաբերյալ մոտիվացված են համանման կոնֆլիկտով: Ավելորդ չի լինի նշել, որ գրողի հայրը, ի տարբերություն հազարավոր հայորդիների հայրերի, մահացել էր ոչ թե հայաստանում ցեղասպանության ժամանակ, այլ Ամերիկայում: «Այստեղ է գալիս, այնտեղ է գնում, դու էլ գիտես, թե ով» (1961) վերնագրված ինքնակենսագրականում Վիլյամ Սարոյանը գրում է մահվան երեւոյթի շուրջ իր մտասէւեռվածության մասին, որը նրան տարիներ շարունակ հանգիստ չէր թողնում: Սրա ամենահավանական պատճառը, թերեւս, այն էր, որ ապագա գրողի հայրը մահացել էր, երբ նա տակվին չէր բոլորել իր կյանքի առաջին երեք տարին: Սարոյանի հայրն ընդամենը երեսուներեւ տարեկան էր, երբ մահացավ կույր աղիքի բորբոքումից:

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը թիվ 20

2.

Սկսենք այն միանգամայն բնական հարցից, թե ինչո՞ւ կամեցան 1925 թ. փետրվարին Յոնմում միմյանց «պատահաբար» հանդիպել հակառակ քաղաքական ճամբարներում հայտնված, անգամ թշնամաբար տրամադրված երկու հայ գործիչներ՝ բոլշեւիկ Չարենցն ու դաշնակցական Վ. Նավասարդյանը: Իր պատմվածքում Չարենցը դաշնակցությանը եւ Վ. Նավասարդյանին տվել է հետաքրքրական բնորոշումներ: Դաշնակցության՝ այդ «տիեզերական կուսակցության» «սյուններից մեկը», որ «**հայտնի էր իր գիտական գերազանց պաշարով եւ տեսական անհուն խորիմացությամբ**» (մեջբերված Նախադասության՝ մեր կողմից ընդգծված մասը Չարենցը գրել է առանց չափերի, ուրեմն՝ այն կարող ենք համարել ուղղակի գնահատական՝ առանց հեզուական եկթատքստի - Ս. Մ.), եւ համայնավար հանճարեղ բանաստեղծը: Հազիվ թե արտասահմանում դաշնակցական երեք նշանավոր գործիչների՝ Ավ. Իսահակյանի, Ավ. Ահարոնյանի եւ Վ. Նավասարդյանի հետ ճակատագրական հանդիպումները լինեին միայն պատահական եւ ունենային միմիայն մարդկային անձնական շարժառիթներ, թեեւ դրանց առկայությունը նույնպես չենք կարող բացառել:

Ինչպես կռահելի է Չարենցի կիսաթափանցիկ եւ Նավասարդյանի բացահայտ ակնարկներից, երեւանում նրանք անձամբ ճանաչելիս են եղել միմյանց: Ավելին. 1919 թ. այն օրից, երբ Հայաստանի Հանրապետության լուսավորության լուսամիտ Նախարար Նիկոլ Աղբալյանը կառավարության շենքում, «սարսելով դաշիճն ու ֆոյե», հայտարարեց, թե «ծնվել է պոետ մի մեծ», Նավասարդյանը դառնում է Չարենցի քնարերգության ջերմ երկրպագուն: Վ. Նավասարդյանի ազնիվ մի խոստովանությունն ասվածի լավագույն հավաստումն է. «Աղբալյանի ներշնչումի տակ ծանոթանալով Չարենցի

ԵՐԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. ՄԻ ԵԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին



երգին՝ արդար գտա այն փառքը, որ հայ անվանի գրադատը հյուսում էր Նորածիլ պոետին,- գրել է Վ. Նավասարդյանը: - Ու այդ օրից մինչեւ բանաստեղծի եղբրական մահը մնացի իր անմահ քնարի ջերմ սիրողներից մեկը:

Ու հաճելի եղավ ինձ, որ կրկին առիթ պիտի ունենամ Չարենցին հանդիպելու:

1925 թ. փետրվարին երկուսն էլ Յոնմում էին. Նավասարդյանը՝ Եգիպտոսից, Չարենցը՝ Խորհրդային Հայաստանից, սակայն երկուսն էլ «անտեղյակ» էին միմյանց նույն տեղում գտնվելուն: Երկուսին էլ հաճախակի հանդիպող մի հայ, որի անունն ինչ-ինչ պատճառներով չի մատնանշվել, կազմակերպում է նրանց տեսակցությունը:

(Հիմքեր կան եկթադրելու, որ այդ միջնորդն Ավետիք Իսահակյանն է եղել, որովհետեւ նույն այդ շրջանում՝ 1925-ի հունվարին, նա Վենետիկում արդեն հանդիպել էր Չարենցին, եւ Չարենցն էլ նույն հունվարին արդեն գրել էր իր նշանավոր «Էլեգիա»

գրված Վենետիկում» -ը՝ Իսահակյանի հետ հանդիպման ու գրույցի տպավորությամբ: Իսկ Յոնմում Չարենցն այդ «ընդհանուր ծանոթի» միջնորդությամբ Նավասարդյանին հանդիպել է փետրվարին եւ այն էլ ո՛չ մեկ անգամ, այլ Յոնմում եղած բոլոր «մի քանի» օրերին: Ցավոք, մեր այս հավանական եկթադրությունը, որ բխում է միայն Նավասարդյանի գրքից եւ մի քանի փաստերի համադրումից, այլ փաստերով չի հիմնավորվում - Ս. Մ.):

Դիմենք Նավասարդյանին. «1924-ի վերջերին Փարիզ էի: Դարձիս դեպի Եգիպտոս՝ գործով մտա Վենետիկ, այնտեղից անցա Յոնմ, ուր մնացի մի քանի օր:

Դիպվածաբար այդ օրերին Յոնմ եկավ նաեւ Չարենցը:

1924-ը վերջացած, եւ մենք ոտք դրած էինք 1925 -ի մեջ:

Մի օր ինձ մոտ եկավ իմ եւ Չարենցի մեկ ընդհանուր ծանոթել մտերմաբար ասավ.

- Ձեզ հետաքրքրական մի լուր. այստեղ է Չարենցը. իրեն հայտնեցի ձեր մասին. փափագ

ունի ձեզ հանդիպելու, բայց չի ուզում, որ դուք այդ մասին իմանաք: Ես խոստացա հանդիպումը գլուխ հանել, բայց իր փափագը գաղտնի պահել. ինչպես տեսնում եք՝ խոստմանս այս վերջին մասը չեմ կատարում, որովհետեւ դժվար է առանց ձեզանից մեկն ու մեկին մոլորեցնելու՝ դյուրավ ձեզ քով քովի բերել, երբ մանավանդ երկուսդ էլ մի քանի օրից պիտի մեկնեք այստեղից. արդ, ի՞նչ է ձեր թելադրանքը:

Անակնկալ լուրը ինձ ուսիություն պատճառեց» (24-25):

Նավասարդյանի բացատրություններից երեւում է, որ Չարենցն ինքն էլ է ցանկություն հայտնել նրան հանդիպելու (Չարենցը Նավասարդյանին պիտի հանձներ երեւանից բերած նրա մոր նամակը), սակայն իրենց հանդիպմանը «պատահական բնույթ» հաղորդելու նպատակով խնդրել է Նախապես Նավասարդյանին չհայտնել այդ մասին:

«**Չարենցի միայն խոստացա անտեղյակ ձեւանալ պոետի փափակ**, - շարունակում է Նավասարդյանը, - պայմանավորվեցինք, որ հետեւյալ օրը ես եւ Չարենցը այցի կգնանք Ազգային թանգարան ու դիպվածաբար թանգարանի որդեւ անկյունում կհանդիպենք իրար:

Իմ հերթին խնդրեցի «**չասել Չարենցին, թե այս - իմ թելադրանքն է**» (ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Մեր խորին համոզմամբ՝ երկու հայ գործիչների ճակատագրական հանդիպումն ունեցել է նաեւ ուրիշ մղումներ. թե՛ դաշնակցական Նավասարդյանին, թե՛ համայնավար Չարենցին՝ որպես պարզապես հայ մարդկանց, անկախ դավանանքից ու կուսակցական պատկանելությունից՝ օտար աշխարհում միմյանց հանդիպելու եր մղում մի ներքին

միասնական խոր մտահոգություն՝ փոքրացված Հայրենիքի եւ Նոր-Նոր ձեւավորվող սփյուռքի, թշնամու չար ձեռքով, ճակատագրի եւ մեծ տերությունների չար կամքով բնօրրանից տեղահանված, տարրաբաժանված ու նույն չար կամքով արդեն միմյանց հակադրված հայաստանահայության ու սփյուռքահայության ճակատագրի համագային խնդիրը:

Մի փոքր հետ գնալով՝ փորձենք հասկանալ, թե ինչու 1915 թ. օգոստոսին գնեցրալ Չեռնոգուբովի հրամանատարությամբ թուրքերի դեմ կռվող յոթերորդ հայկական կամավորական բանակի զինվոր Չարենցը, որ սկզբում սանիտարական վաշտում էր ծառայում եւ երեք հոգիանոց պատգարակի խմբի հրամանատար էր եւ իր իսկ դիմումով մեկնեց կրակի առաջավոր գիծ, հետո դարձավ համայնավար՝ «մի իսկական բոլշեւիկ»: Դա Ռուսաստանում ծավալված հեղափոխությունն իրոք համաշխարհայնացնելու, նաեւ հայության շահերին ծառայեցնելու, արյունահեղությունը կանխելու եւ հայրենիքը փրկելու նպատակին միտված բոլոր ազնիվ նվիրյալների ու բարեխիղճ մոլորյալների ճանապարհն էր՝ Ստեփան Շահումյանից ու Հայկ Բժշկյան - Գայից սկսած մինչեւ Ալեքսանդր Մյասնիկյան ու Վահան Տերյան: Վերջինս ամբողջ խորությամբ ընկալեց բրեստլիտովսկյան խայտառակ հաշտության, բոլշեւիկների բացահայտ թուրքամետ քաղաքականության հակահայ եությունը, համաշխարհային հեղափոխության գառանցանքով խանդավառված իր կուսակիցներին ուղղված բանաստեղծություններից մեկում գրում էր.

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը՝ թիվ 19-20

Մեծ սիրերգակը հայտնում է, որ ինքը «երկու յարուկ» ունի, որոնցից մեկը «պգտիկ» է, մյուսը՝ «մեծ», եւ ինքը չի կարողանում կողոնորոշվել, թե նրանցից որին սիրի, քանզի «պգտիկի սիրտը առաւել կուզե գիս», իսկ «մեծն աւտ. «Արեկ մուտ ի յիս»»: Սիրահարին խնեթացնում են երկուսն էլ, եւ նա չգիտի, թե նրանցից որն է գեղեցիկ, որին ընտրի: «Աղւորներից» մեկը «ցորեկվան արեւ» է, մյուսը՝ «լուսին մութ գիշերուն»: Ի վերջո նա կայացնում է իր որոշումը՝ Նախապատվությունը տալով արեգակին, քանզի լուսինը սովոր է «խոռ կենալուն».

... Լուսին, չեմ սիրեր գրեզ, դուն սովոր ես խոռ կենալուն.
Երթամ զարեգակ սիրեմ որ ծագէ լոյսն առաւօտուն:

Էջ 145
Հայրեններից մեկում Զուլալն ասում է.
Ա՛յ իմ Նոր սիրով սիրած, Նոր սիրով հաւընած.
Իր ծոցն է լուսով լըցած, իւր նըման իսկի չէ ծընած...

Էջ 184
Սրանից հետեւություն անելով էլ՝ կարող ենք ասել, որ նա ունեցել է նաեւ ուրիշ սերկամ սերեր, եւ այդ մեկը նրա «Նոր սիրունն» է: Այդ մասին է վկայում նաեւ այն, որ երբեմն նա կարոտում է իր պատանեկության սիրուն, առաջին սրտի ուզածին ու առաջին սիրածին, որին հիշելիս ուրիշի մասին չի կարողանում մտածել: Այս առիթով Սեւակը գրում է. «Ուրիշ դեպքերում սիրահարի այս հաճախակի մտքափոխու-

Նահապետ Զուլալ. սիրո մեծ երգիչը

թյունը կարող էր կասկած հարուցել նրա զգացմունքի խորության ու լրջության վրա: Բայց այն, ինչ ներելի չէ ուրիշին, հասկանալի է Զուլալի մոտ» (Պարույր Սեւակ, Երկեր, հ.5, Եր., 1957, էջ 34): Պետք է նկատել, որ Զուլալն իր ժամանակին արդեն թափանցել էր սիրո եության մեջ, տարրալուծել դրա բաղադրիչները, եւ սերը մարդկային զգացումներից ամենաուժեղն է, որն աշխարհում հայտնվելուն պես գալիս եւ թափվում է երգչի սիրտը.

Երբ սերն ի յաշխարհս եկաւ,
Եկաւ իմ սիրտըս բնակեցաւ,
Ապա յիմ սրտես ի դուրս՝
Երկրորէ Երկիր թափեցաւ,
Եկաւ ի գըլուխս ելաւ,
Յըղեղս եկաւ՝ թառեցաւ,
Աչիցս արտասուք ուզեց,
Նայ արիւն ի վայր վաթեցաւ:
Էջ 261

Նա զգում էր այն, ինչ հետագայում պիտի գրեր մեկ այլ հանճար: Սերը չունի շարունակություն, այլ միայն սկիզբ: Սիրած էակից երբեք էլ չեն բաժանվում, պարզապես նա երբեմն փոխում է իր անունը, կերպանքները, հասակն ու տարիքը, բայց ո՛չ երբեք իրեն:

Սիրած Եակը սեր է՝ կյանք, կենդանություն, երջանկություն: Չի կարելի չսիրել

կնոջը, քանզի կյանքը լուսավորում է նրա գեղեցկությամբ: Ըստ աշխարհի բոլոր մեծ բանաստեղծների՝ ով կին չի սիրում, չի կարող սիրել եւ կյանքը: Այդպես է մտածել եւ Նահապետ Զուլալը, ով առանց այլաբանության կերտել է կնոջ ջնքաղ արտաքին իր ողջ բարեմասնություններով:

◆◆◆

Մինչ Նահապետ Զուլալը միջնադարյան սիրերգությունը տվել է գեղեցկության եւ սիրո հրաշալի նմուշներ: Սակայն Զուլալը չի բավարարվում սերն ու սիրուհուն ներքողելով. ստեղծում է զգացմունքի առավել խոր ու ճշմարիտ պատկերը, բացահայտում սիրո ներքին բովանդակությունը, հոգեբանական կողմը, ինչն էլ նրա երգի գլխավոր առանձնահատկությունն է: Հայրեններում կինը միայն երկրպագության եւ հիացմունքի առարկա չէ, որի մասին խոսվում է, այլ ինքնուրույն գործող անձ, որը սիրում է, տառապում, դրսեւորում իր անհատականությունը, առեղծվածային եությունը, ինչի հետեւանքով էլ քառյակներին բնորոշ են դառնում հույզերի ու ապրումների փոխադարձ դրսեւորումները, զգացմունքի անմիջականությունն ու համոզիչ լինելը: Շատ հայրեններում սիրո Նախածեռնողը ազատ, անկաշկանդ



«աղւորն» է, որն իր հմայքներով, ծիծաղով, թաքուն նշաններով ու գրավիչ աչքերով խեղճահան է անում սիրահարին, ինչի դեմ էլ բողբոջում է վերջինս, խնդրում յարին, որ քալի իսկ հոնքերը չշարժի («Երբ քալիս՝ գունդերդ մի՛ շարժեր») իրեն չստիպի արտասվել, քանզի նրա աչքերի «խընճերն շատ մարդու արյուն է խմեր».

Խօշ եար, արեւո՛ւղ համար, որբուկ եմ,
գիս մի՛ լացըներ.
Տղայ եմ, չեմ ի կենուր, գիս ի քո կրակըն մի ձգեր:

Էջ 147

Շարունակությունը՝ էջ 6



Սկիզբը՝ թիվ 14-17, 19-21

Կան մերկ մարդկանց համայնքներ: Խոսքը ոչ թե պապուականների մասին է, այլ ամենաքաղաքակիրթ, նրա՛նց, ում ասում են նուդիստներ: Բայց նրանք հանրությանը չեն վնասում իրենց ճաշակով ու իրենց բարոյականությամբ, որովհետև իրենց չեն պարտադրում ոչ մեկին:

Նրանք հավաքվում են իրենց կոզիներում, իրենց առանձնացված լողափերում եւ մերկ ապրում են իրենց կյանքն իրար աչքի առջեւ՝ մայրը՝ տղայի, աղջիկը՝ հոր, տատը՝ հարեւան պապի, պապը... Էլ դու սուս... Սրանք էլ իրենց ազատությունն այսպես են հասկացել եւ այսպես են վայելում: Նախանձել կարելի է...

Հիմա, ինչ էլ անեք, ինչ էլ գրեք, ինչպես էլ գրեք, ի վերջո, պետք է ստեղծեք արվեստի արժեք: Հակառակ դեպքում ապարդյուն կորցրած ժամանակ է փորձարարության այս երկար շրջանը: Այն, ինչ անում եք, այ-

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

լեւս հետաքրքրական չէ, իսկ եթե ոմանց հետաքրքրում է, ապա որպես սանջուլոտների թամաշա: «Կապկազ» թամաշայից հետո անվարտիքավորների մի նոր թամաշա:

Հիմա թամաշայի համար դուք Չարենց-տաճարի դեմ եք ելել: Էլ ինչո՞ւ եք տարբերվում այն թուրքերից, ովքեր հենց վերջերս ձեր իսկ աչքի առջեւ Ջուղայում խաչքարեր ջարդեցին եւ պղծեցին մեր ազգային սրբությունները: Իսկ մենք ընդամենը հերթական անգամ անտերուհի գայլի նման ոռնացինք մեր ցավը, տեսարաններ ցուցադրեցինք եւ համակերպվեցինք կրկնվող ազգային ծանր վիրավորանքի հետ, մինչդեռ պետք է նրանց պատժելու ձեւ մտածեինք:

Հիմա դուք Չարենց-տաճար-խաչքար եք ուզում պղծել: Ինչո՞ւ: Որպեսզի ուշադրություն հրավիրեք, եւ ձեզ տեսնե՛ն: Ասեմ՝ տեսե՛լ եւ, սպասում են մի լավ գրական գործի, եւ վստահորեն արձագանքը չի ուշանա:

Ցեղասպանությունը ժխտողների դեմ Ֆրանսիայում օրենք է նախապատրաստվում: Ժխտողը քրեական պատասխանատվության է ենթարկվելու: Արվեստի ազատությունն ամենեւին չի ենթադրում ազգային արժեքների պղծում: Ուստի այս դեպքում եւս այդ օրենքը պետք է կիրառվի: Թե չէ Ֆրանսահայ Դեմի Դոնիկյանի (Դեմիս Տոնիկյան) նման կփորձեք թքել Արարատի ուղղությամբ, բայց ձեր լորձուկները քամին ետ կբերի եւ ձեզ կխեղդի, ինչպես խեղդեց նրան: Համաշխարհայնացման միջոցներով սնվող եւ ազգային մաքուր արժեքներն ապականող քերթները գործ չունեն արվեստի տաճարում: Թերմա՛ցքն է իրենցը: Իրենցը մտավոր աղանդավորի չգոյ վիճակն է:

Ե. Չարենցը պահանջում է: Հագե՛ք ձեր հանած վարտիքները, որովհետեւ ձեր մերկությունն այլեւս հետաքրքրական չէ անգամ ուշադրություն գրավելու համար: Համատարած մերկության տոնահանդես է. «Գինը Էժան Է, ջրկի՛»:

Մաքրե՛ք ձեր լեզուն ամեն տեսակի գռեհկաբանությունից, ամեն տեսակի հայհոյաբանությունից: Անգամ բարբառախոսությունն է տհաճ: Ի՛նչ է, նորից պետք է ետ գնանք Աբովյանի ժամանակները, որ տոտիկ-տոտիկ քայլ անելով՝ գանք ու հասնենք մինչեւ Տերյա՛ն, Չարե՛նց, Սեսե՛կ...

Օգտվե՛ք խոսքի ազատության հնարավորությունից, ձեզ մի՛ կաշկանդեք սեռական օրգանների բառային օրգազմով: Ափսոս է ձեզ տրված մտավոր ժամանակը:

Ե՛տ նայեք հայ եւ համաշխարհային քաղաքակրթության անցած ճանապարհին, դուք այդ հզոր ավանդույթների շարունակողն եք եւ ոչ թե դրսից հովանավորվող գրական աղանդ:

Մերժե՛ք այն ամենը, ինչի մեջ նախեւառաջ ազգակործան ծրագիր է դրված: Հայոց անմեռ ոգու կրողներն եք դուք եւ այն առասպելական ճորտի նման մի՛ վատնեք ձեր ջանքը իզուր:

Եթե դուք ցանկանում եք ձեր ժամանակի գործ իրականությանը հակադրվել հակարվեստի միջոցներով, եթե ձեր ընդվզման ձեւը հակաարվեստն է, ապա պետք է տեսնեք, որ դրանով դուք ընդամենը ավելի եք ապականում ապականված իրականությունը, եւ ձեր հակաարվեստը դառնում է գաղափար ու վանող ճահիճ... Գեղեցկությունը, վեհն ու հիասքանչը այդ երբևիցե՛ր դարձան ծիծաղելի, իսկ տգեղն ու գարշելին՝ օրինակելի:

Չարենցն ասում է. իմ դեմ ելնելուց առաջ իմ գործերը կարդացեք եւ հատկապես ապագա երգասաններին հասցեագրված տաղը:

Չարենցը նաեւ պատվիրում է. ձեր այս մոլոր ու խոտոր փնտրտուքից ելք գտնելու համար եկեք ինձ մոտ, եւ ես ձեզ կհանգստացնեմ. «Եկայք առ իս, ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից գձեգ»:

Չարենցի դեմ ուղղված անգիտությունները շարունակվում են: Հայտնվել է լրագրողի կերպարանք ընդունած մի խղճուկ արարած (Ն. Մամիկոնյան) եւ գրողի ծննդյան 113-ամյակը «Առավոտ» թերթում նշել այսպես՝ մեզ պետք չեն Չարենցի «Մահվան տեսիլ»-ները: Ի՛նչ լավ է, որ երեք «Մահվան տեսիլ» է գրել եւ ոչ թե հինգ: Եվ հայտնվել է Չեխովի անվան դպրոցի մի ապագայնացած ծնող (ծննունդ...), ով ձայնակցել է այս մոլորյալին:

Տիկիններ՝ (նաեւ պարոններ), մի՛ մոռացե՛ք՝ ինչպիսին ժողովրդի պատմությունն է, այնպիսին էլ ժողովրդի գրականությունն է: Գրականությունը երկրի ձայնն է: Ի՛նչ է, ուզում եք ցեղասպանության մասին խոսել, բայց մերժե՛լ այդ ցավից (ողբից) ծնված բանաստեղծությունը: Զի՛ մերժվի, որովհետեւ պատմությունը ետընթաց շարժում չունի: Այդպես արտահայտվելով՝ ի՛նչ մտայնություն եք սերմանում: Թե՛ ձեզ թվում է՝ Բաֆֆու «Սամվելի» հետ մեկտեղ կարող եք ժխտել Գոգոլի «Տարաս Բուլբան»: Այդպես վարվելու դեպքում ժխտեք նաեւ Շեքսպիրի «Համլետը», «Մակբեթը»: Սպանությունը սպանություն է՝ լինի հանուն հայրենիքի թե հանուն փառքի:

Շարունակությունը՝ էջ 6

ՋԵՅՄՍ ՌԱՍՍԵԼԸ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ

ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 3

451 թվի Ավարայրի ճակատամարտից առաջ պարսից Հագկերտ II արքայից արքան, փղերի կոխան դարձնելու սպառնալիքով, քրիստոնյա հայ ժողովրդին կրակապաշտության հետ միասին պարտադրում էր նաեւ ընդունել համատարած արյունապղծության Չորոաստրիզմի օրենքը՝ իր հրովարտակում գրելով. «Կարճեսցին եւ արգելցին օրենք սուրբ ամուսնութեան, զոր ունեին ի նախնեաց ըստ կարգի քրիստոնեութեանն. այլ փոխանակ ընդ կնոջ միոյ՝ բազում կանայս արասցեն. զի անեցեալ բազմացին ազգք Հայոց: Դստերք հարանց լինիցին, եւ քորք՝ եղբարց. մարք մի՛ ելցեն յորդուց, այլ եւ թոռուք ելցեն յանկողինս հաւուց» (Եղիշէ, էջ 52: Աշխարհաբար՝ «Պետք է կարճվի եւ արգելվի սուրբ ամուսնության օրենքը, որ ունեին նախնիներից քրիստոնեության սովորության համաձայն. մեկ կնոջ փոխարեն թող շատ կանայք առնեն, որպեսզի Հայոց ազգն աճի-բազմանա: Աղջիկներն ամուսնանան [իրենց] հայրերի հետ, եւ քույրերը՝ եղբայրների հետ. մայրերը չխորշեն [իրենց] որդիներից, այլ եւ թոռները մտնեն [իրենց] պապերի անկողինը» (Եղիշէի Վարդանանց պատմությունը, թարգմ.՝ Ե. Տեր-Մինասյանի, Եր., 1958, էջ 51):

«Չրադաշտական Հայաստանի» մինչեւ վերջ անապացույց եւ չհիմնավորված գաղափարը, որին հետամուտ է Ջ. Ռասսելն իր ծավալուն ուսումնասիրության մեջ, թվում է, թե հիմա էլ ինքն է ամեն էջում հալածում հեղինակին եւ մղում իր հետազոտական բանասերության: Այն, ինչ 451 թվին Հագկերտ II-ին չհաջողվեց պարտադրել քրիստոնյա հայերին, այժմ Հարվարդի պրոֆեսորն ինքն է փորձում իբրեւ կատարված իրողություն ներկայացնել՝ ըստ իր հետապնդած նպատակի, այն է՝ նախաքրիստոնեական շրջանի հեթանոս հայերին վերագրել սեռական խառնակություն եւ արյունապղծություն՝ գանազան օտարացեղ ավանդություններից քաղած եւ իրար կցմցած կցկտուր փաստերով, որոնք որեւէ առնչություն չունեն Հայաստանի եւ հայության հետ: Որպես մոր եւ որդու ինցեստի՝ սեռական կապի նմուշ՝ նա բերում է Զ. ա. մոտ 6000 տարվա հնության փոքրասիական կամ փոյուզիական մի առասպելից՝ Կյուբելե (M. J. Vermaseren, Cybele and Attis: The Myth and the Cult, London, 1977, 22) կամ Կուբաբա մոր եւ նրանից ծնված երիտասարդ որդու՝ Ատիսի արյունապիղծ կյալը (James R. Russell, էջ 235-236): Որպես մոր եւ որդու հայկական ինցեստի նմուշ՝ նա բերում է Ատ-

րեստանի թագուհի Շամիրամի վավաշոտ սերը Հայոց թագավոր, երիտասարդ Արա Գեղեցիկի հանդեպ: Ասորեստանցի տիկին եւ հայ երիտասարդ թագավոր - ո՞ւր է այստեղ մոր եւ որդու սեռական հարաբերություն: Շամիրամի եւ Արա Գեղեցիկի փոխհարաբերության նույն մեկնաբանումը Ռասսելը համառորեն կրկնում է մի քանի գլուխներում՝ իր ձախավեր գաղափարը գլուխ չբերելու համար մեղադրելով Սովսես Խորենացուն, թե նա, պատմական ավանդությունը գունազարդելով, մեջտեղից վերացրել է Շամիրամի եւ Արա Գեղեցիկի միջեւ եղած արյունապիղծ հարաբերությունը, ինչ որ գոյություն ուներ փոքրասիական Կյուբելեի եւ Ատիսի միջեւ: Ռասսելի կարծիքով՝ «Թե՛ Արան եւ թե՛ Բակտրիայի գրադաշտ թագավորը ներկայացվում են որպես Շամիրամի թշնամիներ, եւ դրա հետեւանքով այս երկուսը նույնացվում են իրար հետ: Արա-յի եւ Շամիրամի պայքարը միայն երկու ազգերի միջեւ պատերազմի պատմություն չէր» (James R. Russell, էջ 50): Եվ «խորամուկ» լինելով այս երեք առասպելական կերպարների հարաբերությունների մեջ՝ նա հայտնաբերել է, թե իբր Խորենացու պատմական գունազարդման հետեւանքով քողարկվել է Կյուբելեի եւ Ատիսի կրքի առասպելը:



Այստեղից ավելի քան 186 էջ հետո մեր պրոֆեսորը դարձյալ վերադառնում է Շամիրամի եւ Արայի ինցեստին՝ այս անգամ միտումնավոր ներառելով շումերական Նանա աստվածուհու պաշտամունքը, որը Շումերի Ուրուկ քաղաքի հովանավորուհին էր եղել, եւ որի արձանը Էլամի թագավոր Կուտեք-Նահիուստը մեր թվարկությունից 1700 տարի առաջ կողոպտել էր Շումերի Ուրուկ քաղաքից եւ թաքցրել Սուսայում, մինչեւ որ մ. թ. ա. 646 թվին՝ Ասորեստանի թագավոր Ա-

շուրբանիպալի օրոք (մ. թ. ա. 668-633), այն հայտնաբերվեց, եւ նրա պաշտամունքը նորից ծաղկեց Միջագետքում. «... պարսիկները հավանաբար փոխառել են դա իրենց նվաճած Էլամներից: Աքեմենյանների տիրապետության շրջանում բանակը եւ կառավարությունը պետք է որ տարածած լինեին պաշտամունքը արեւելյան Իրանում» (James R. Russell, էջ 237):

Շարունակելի

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Սկզբը՝ էջ 5

Գնացեք ետ եւ ձեր սրբագրումներն սկսեք Էսքիլեսի «Օրեստիա» եռագրության, Սոփոկլեսի «Անտիգոնե», Եվրիպիդեսի «Մեդեա» ողբերգությունների մեջ եւ եկեք չորեք հայ գրականության դռանը, տեսնեք ի՞նչ կատարեցին:

Այդ իսկ պատճառով գրողին կամ նրա առանձին երկերը մերժելուց առաջ նախ մտածեք ձեր իմացական կարողությունների, մասնագիտական որակների մասին եւ ապա հարց տվեք ձեզ՝ ո՞ւմ վրա էք սուր բարձրացնում, եւ ո՞վ է ձեզ տվել այդ... իրավունքը:

Ը. Չարենցի «Գիրք մնացորդաց»-ի մասին: Այս հատորում Չարենցի անտիպների նոր ձեռքբերումներն են, որոնք պահվում են Գրականության եւ արվեստի թանգարանի, Մատենադարանի Չարենցի ֆոնդերում, այլեւայլ պահոցներում: Գրվել են հիմնականում 1935-1937 թթ., երբ բանաստեղծը գտնվում էր հոգեկան անհավասարակշիռ, լարված վիճակների մեջ եւ ուներ առողջական բազմապիսի խնդիրներ:

Կան գործեր՝ գրված 1920-ականների վերջերին եւ 1930-ականների սկզբներին, որոնց թիվը քիչ է: Հրապարակվում են նաեւ Չարենցի ժառանգությունը լրացնող նամակներ, աշխատանքային գրություններ եւ այլեւայլ էջեր:

Այս ամենով հանդերձ՝ սույն ժողովածուի նորությունը պայմանավորված է գրողի անտիպ ժառանգության այն էջերով, որոնք Չարենցի մի նոր կերպար են բացահայտում բարդ ու խառնակ ժամանակների մեջ: Այդ կերպարի ուրվագծերն արդեն իսկ կային բանաստեղծի անտիպների նախորդ ժողովածուներում, այստեղ որոշ գծեր ավելի խորացել են ու թանձրացել:

Ամեն ինչի հիմքը բանաստեղծի ու ժամանակի վարչակարգի բախումն է, իսկ ժամանակն ուներ երկու բեռն՝ մի կողմում՝ Ստալին-Բերիա-Ամատուհի, մյուս կողմում՝ ինքը: Այսինքն՝ բոլշևիկյան վարչակարգն ու նրա ներկայացուցիչները եւ ստեղծագործ անհատը, այլ կերպ՝ Պետությունն ու Հանճարը: Ահա այս պահին էլ գրեց.

...Պետությունն ամբողջ իր
ապարտով
Ելել է ահա... մի պոետի դեմ...
Էլ ինչպես ես ինձ ահով չդիտեմ,
Եվ չհիանամ իմ «բիրտ» սֆաթով...
Եվ... զարհուրելի իմ ուժով հպարտ՝
Բացականչեմ՝ «- Հերոս եմ ու մարդ!!!»:
ՆԷ, էջ 89

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Չարենցն եռթամբ հակաստալինյան դիրքորոշում ուներ. բազմաթիվ բանաստեղծությունների մեջ նա ծաղրել, ոչնչացրել է Ստալինին: Բայց եւ եղել են պահեր, երբ Չարենցը փորձել է ժամանակի աչքերով նայել նրան ու նրա նմաններին, ինչն էլ նրա ներսում վերածվել է մահացու պայթյունի: Չարենցը տեսնում էր, թե ինչ է կատարվում երկրում, ինչ է կատարվում ժողովրդի հետ. «Գիրք ճանապարհի»-ի տպագրության, 1935-ի հարցաքննությունների առիթով իր վրա էր զգացել ամբողջ անեծքը, բայց դեռեւս հույս էր կապում երկրի եւ իր փրկության հետ: Ահա սրանով պետք է պայմանավորել ոչ միայն Ստալինին քննադատող, այլեւ գնահատող բանաստեղծությունների առկայությունը:

Հայ կուսակցական դեկավարներից Չարենցը մտերիմ էր Ադասի Խանջյանի հետ եւ շատ ծանր տարավ նրա սպանությունը: Այս առումով բացառիկ է «Դոֆինը նայիրական» շարքը՝ շարքում գետեղված սոսետների տարբերակներով, սեւագրություններով ու մաքրագրություններով:

Այլ էր Չարենցի հարաբերությունը Խանջյանի հաջորդի՝ Ամատուհու հետ, ում կերպարը եւս նա փորձել է մարմնավորել պոեմներում, ինչպես նաեւ նրան է հասցեագրել նամակներ եւ այլեւայլ գրություններ:

Ամատուհին փակեց Չարենցի ճանապարհը:

Առանձին բացատրություն են պահանջում Չարենցի սիրային, երբեմն երոտիկ, երբեմն սեռական շատ բաց բանաստեղծությունները: Համատարած մղձավանջի մեջ Չարենցի համար սերը մեծագույն ազատություն էր, ապրելու հնարավորություն, այդ իսկ պատճառով նա վերացնում է սահմաններն ու արգելքները եւ իրեն տեսնում տարբեր իրավիճակների մեջ, որ ապրել են իր մեծագույն նախորդներից շատ-շատերը: Սա հոգեվերլուծական խոր բացատրություն պահանջող հարցադրում է. հալածանքների դիմաց՝ սեր, արգելանքների դիմաց՝ զգայալի ապրումներ, մահվան դիմաց՝ սեռական ազատություն:

Արուս Ոսկանյանին նվիրված բազմաթիվ գործերում նրա արվեստի մեծարանքը՝ գովքը, վերածվում է նաեւ ներանձնական բաց ապրումների, որոնց կապակցությամբ, սակայն, «Արուսին մենակ» պոեմում Չարենցն ունի այսպիսի միջարկություն՝

Օ, իմ ուզած միակ
խմաստն այն է՝ լոկ,
Որ դու լինես իմ շոգ
արեւն՝ ինձ կհզող...
Ուրիշ ոչինչ... Եվ
խնդրում եմ, որ խելոք,
Որպես Արուս՝ այրես...
Ամենախոր,

ամենամույթ եւ ինտիմ
Պոեմն է այս՝ գրված լոկ քեզ

համար, օ՛,-
Ինչ որ ունեմ՝ խորունկ, մթին, անդին-
Պատմում եմ քեզ զարմանալի


«Ժամին»:

Եվ թվում է իբրեւ հանաք գրված այս
Պոեմն ինտիմ, եթե դու այն չըվառես...
Ապագայում մարդիկ շինեն ապացույց,
Եվ ինձ - հիվանդ մի նոր Մազդիս
համարեն...

«Իբրեւ հանաք» գրված այս եւ շատ այլ «ինտիմ» տողերի մեջ ոմանք այլ բան են որոնում, մինչդեռ Չարենցը պահպանում է սիրո այն ոգեւորությունը, ինչն ի սկզբանե սահմանված է եղել տղամարդու եւ կնոջ համար: Թմրադեղերի պարզեւած զգայական պահերին Չարենցը սիրո ապրումի այլեւայլ ձեւեր ու վիճակներ է հիշատակում, բայց երբեք չպետք է մոռանանք՝ նրա իսկ ցուցումով այդ ամենն ընկալելու «իբրեւ հանաք»: Սա, կարծում եմ, այն դեպքը չէ, որ Չարենցի կապակցությամբ հեռուն գնացող անհարկի դատողությունների տեղիք տա:

Չարենցի եւ այս բնույթի բանաստեղծությունների մասին հավելենք:

1926 թ. Մարիանա Այվազյանի վրա կրակելուց եւ դատական, բանտային քաջքշուկների մեջ ընկնելուց հետո Չարենցը եւ-



թարկվել է բժշկական քննությունների: Բժշկական քննություններից մեկը ինքը՝ Չարենցն է պահանջել՝ հետեւյալ պատճառաբանությամբ. «Տառապում է անքնությամբ եւ ջղային վերին աստիճանի քայքայված դրության մեջ է»: Այդ պահանջի կապակցությամբ Երեւանի Առաջին շրջանի ժողովրդական քննիչ Գրո Գրիգորյանն իր հերթին պահանջել է քննել Չարենցի ամբողջ հոգեկան եւ նյարդային կառուցվածքը, հոգեկան եւ մտավոր դրությունը եւ «Տալ սեռական հարաբերությունների քննազրկ» չկա՞ արդյոք որեւէ շեղում բնական սեռական հարաբերությունից» («Բանբեր Հայաստանի արխիվների», 1995, թիվ 1):

Բժիշկների եզրակացությունը հայտնի է դարձել հոկտեմբերի 7-ին: Ըստ այդմ՝ «Չարենցը պատկանում է հոգեպես անհավասարակշիռ անձանց թվին՝ ցիկլոթիմային եւ շիզոթիմային կառուցվածքների խառնուրդով (ցիկլոթիմային շիզոիդ), որի հիմքում մի կողմից՝ ի հայտ են գալիս թախիծի նոպաներ եւ սարսափի ու կասկածամտության վիճակներ՝ դիփսոմանյան բնույթի ախտաբանական հարբեցողությամբ, մյուս կողմից՝ խթանային-սեւեռուն երեւույթներ՝ հակա-սոցիալական ելույթներով»:

Շարունակությունը՝ էջ 8



Սկզբը՝ էջ 4

Սիրած կինը գիտակցում է իր հմայքների գորությունը, ամեն կերպ փորձում է գրավել իր սիրելի ուշադրությունը. նա գլխաշորը թույլ է կապում, որպեսզի ճակատը բացվի, թուխ աչքերը ներկում է, սիրելիի ճանապարհին կանգնում է «շատ շապկանց»:

Սոխախտվող ի վար կուգի, լուկ
մի ուշիկ ձայն էած.

Դառնում ի յետիս նայիմ, խօշ
եարս է կանգնեմ՝
շար շապկանց.

Չլաչակն թուլումով կապեր,
զկես ճակտին թողեր է ի բաց.
Թուխ աչուին ծարուր քաշեր,
էտ քաֆրիկդ ելեր յօրինաց:
Էջ 143

Քուչակյան «կոզալին» հաճախ ենք տեսնում իր տան դռանը կանգնած, որտեղից էլ աչքերի եւ հոնքերի նշաններով գրավում է յարի ուշադրությունը: Համեմատելով Նաղաշ Հովնաթանի եւ Նահապետ Քուչակի սիրելիների՝ Հովհաննես Թումանյանը գրում է. «Հովնաթանի սիրածը մի ջահել այրի է, Քուչակինն էլ՝ սրա նման մինը: ... Ծիշտ Հովնաթանի սիրածի նման մեկն էլ սա է, միայն թե նա պարտեզից, վարդերի միջից է ժպտում, աչքով-ուներով անում, սա պարտեզ չունի, կիսաբաց դռնիցն է ժպտում ու թաքուն նշաններ անում» (Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1994, հ. 6, էջ 322-323):

Նահապետ Քուչակ. սիրո մեծ երգիչը

Հերոսը խոստովանում է սիրուհուն, որ իր համար նա ավելի գեղեցիկ է երեւում այն ժամանակ, երբ կանաչ ու կարմիր հագուստով կիսաբաց դռնից նայում է, ամոթխածորեն ժպտում, աչքով-ուներով անում, իր «տխմար խելքը» տանում.

...Յայնժամ ինձ աղւոր թվիս՝
երբ ելնես ձեր դուռըն կանգնիս.
Դուռն ալ կիսաբաց անես, ցած
հայիս՝ մանտրիկ ծիծաղիս,
Աչօքդ, ունովդ անես, զիմ
տխմար խելքն կու տանիս:

Էջ 182

Համարձակ գեղեցկուհին, սակայն, միայն տան դռնից չէ, որ գրավում է յարի ուշադրությունը: Նույնիսկ խնջույքի եւ ուրախության ժամանակ նա, «մեջիս» նստած, սիրահարին այրում է իր «կարմիր ու ճերմակ երեսով», գրուցում նրա հետ հոնքերով, կոճակները «արձակ» անելով՝ ցույց է տալիս «ճերմակ ծոցը»:

- Կարմիր ու ճերմակ երես, ա՛մ
քանի՜ դուռ գիս պիտ երես.

- Զանի որ մեջիս նստիս, ունե-
րովդ հետ ինձ զըրուցես.

Կոճիկդ ալ արձակ այնես, ու
ճերմակ ծոցդ ցըցընես.

Քնարական հերոսը չգիտի՝ ինչքան ժամանակ պիտի այրվի սի-

րուհու հմայքներից, սակայն դա իր համար ավելի հաճելի է, քան յարի հեռանալը, քանզի ինքը կզրկվի նրա ճերմակ «ծոցով» հիանալուց.

Կու վախեմ՝ թողուս, ելնես ու
ծոցեդ մաիրում մընամ ես:

Էջ 181

Միայն հմայքներով չէ, որ «խօշ եարք» գրավում է սիրելիին: Նա վերջինիս «խաթրին համար» նրանց թաղում է ապրում, սակայն «նազ է ծախում» եւ համբույրի չի արժանացնում: Հերոսը պատրաստ է այնքան գովել սիրուհուն, մինչեւ «պագի» արժանանա, որպեսզի սերը լիարժեք դառնա: Իսկ զարնանը «կյուզելը», իբրեւ նվեր, սիրահարին վարդ է ուղարկում՝ վրան իր մազը փաթաթելով: Ծիշտ է՝ կտրիճը փորձում է իր կարոտն առնել, սակայն դրանով չի բավարարվում, քանզի սերն ագահ է, եւ նվերը համեմատում է ավագի հետ, որով ոչ ոք տուն չի սարքում, ուրեմն ինքն էլ չի կարող երջանակալ միայն վարդով.

...Առի երեսիս դըրի, զիմ ելած
հոգիս դարձուցեր.

Ես ըզվարդն ա՛լ ի՞նչ անեմ,
զավագն տնակ ո՞վ արեր:

Էջ 305

Հայրենների մի մասը կառուցված է երկխոսության ձեւով, ինչը հնարավորություն է տալիս քնարական հերոսներին արտահայտել իրենց փոխադարձ զգացմունքները եւ ավելի գեղեցկացնել կյանքը: Սիրահարը գովաբանում է իր սիրուհուն գեղեցիկ համեմատություններով եւ էլ ավելի արտահայտիչ դարձնում նրա պատկերը.

- Ասես թե եաղութն ես դու կամ
զըմրու՞թ կամ ամբարինայ.

Թափած է ի քո վերայ
վարդեջուր հազար փիալայ:

Իսկ գեղեցկուհուն միշտ հաճելի է լսել իր հմայքների գովքը սիրահարից: Ունկնդիր լինելով յարի գեղեցիկ խոսքերին՝ երջանիկ սիրուհին համաձայնում է նրան նվիրել իր ծոցը վայելքի համար.

Հոգի՛, թե զայդ ինձ ասիր, նա
ճերմակ ծոցըս քի ծառայ.

Չկոճկիկս այլ արձակ անեմ,
մուտ ի մեջըն յեշրաթ արա՛:
Էջ 280

Շարունակելի
Վարդան ԵՐԻՎԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու,
դոցենտ



Սկիզբը՝ էջ 4

Չեմ հավատում ծիչերին ձեր ցնծագին Ու խանդավառ աղմուկներին այս շփոթ, Գաղտնի մի թույն կեղեքում է իմ հոգին, Եվ ձեր խիղճը սարսեցնում է որպես բոթ.

Ո՛վ է պաշտպան հիմա երկրին իմ ավեր, Ո՛վ է թարգման մեր դարավոր տանջանքին...

Բարեխիղճ մոլորյալների թվում էր նաեւ այդ հեղափոխության մեծագույն երգիչ Եղիշե Չարենցը։ Ուշադրություն դարձնենք Վ. Նավասարդյանի մի այլ կարեւոր խոստովանությանը. «Հայաստանը տակավին չխորհրդայնացած՝ Չարենցն արդեն Չարենց էր»։ Որքա՜ն համահունչ է Պ. Սեւակի «Որ տարիքում էլ մենք Չարենցին կորցնեինք՝ մեծ բանաստեղծ կորցրած կլինեինք» բանաձեւումին։

Հեղափոխական խանդավառությունը, սակայն, ումանց շուտով, ումանց էլ համեմատաբար ուշ կանգնեցրեց խոր հիասթափության առջեւ։ Չարենցը հեղափոխության գիվոր ու բանաստեղծ դարձավ հանուն իր հայրենիքի ու ժողովրդի, հանուն իր փայփայած ազգային վեհ նպատակների, բայց նաեւ այն բանաստեղծն էր նա, որի երգերում գրեթե միաժամանակ, կողք կողքի, հաճախ էլ նույն ստեղծագործության մեջ դրսևորվում էին ազգային ողբերգությունն ու հեղափոխական խանդավառությունը։ Մի քանի տարում իրար հետեւից ծնվեցին «Դանթեական առասպելն» (1915-16) ու «Վահագնը» (1916), «Հարդագողի ճամփորդներն» (1918) ու «Ողջակիզվող կրակը» (1918-20), «Սոման» (1918) ու «Ամբոխները խելագարվածը» (1918-19), «Ամենապոեմն» (1920) ու «Մահվան տեսի-

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ԿԱՅԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. ՄԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

լը» (1920), «Տաղարանը» (1920-21), որի եզրափակիչ բանաստեղծությունն էր անգուգական «Ես իմ անուշ Հայաստանին»։

Չարենցի այս ներքին երկպառակությունները ծնունդ էին նրա մեջ ազգային ցավի եւ հեղափոխական հերոսականության համատեղումից, որը նրա իսկ մարդկային հերոսականության ու ողբերգականության հիմքերն էին եւ, ինչպես Դ. Վարուժանի պարագայում, թելադրված էին նրա դարաշրջանով ու ապրած կյանքով։ Բնական է, որ նրա՝ որպես 1920-30-ական թթ. գրական առաջնորդի նկատմամբ էլ պիտի դրսևորվեր երկակի ու հակասական վերաբերմունք. դաշնակցականները, նաեւ ազնիվ բոլշևիկ մտավորականները պիտի գնահատեին նրա երկերի հզոր թափը, բարձր արվեստն ու ազգային ոգին, իսկ Չարենցի թշնամիները, բոլշևիկյան նեղմիտ ու կարճատես քննադատությունն էլ պետական որոշակի հանձնարարությամբ որպես նացիոնալիզմի արտահայտություն պիտի քննադատեին նրա ազգային բովանդակությամբ երկերը, մասնավոր՝ «Ես իմ անուշ Հայաստանին», որը գրվելուց հետո տպագրվեց Հ. Սուրխաթյանի կազմած Նշանավոր «Գրական գոհարներ» ժողովածուում ու լայնորեն տարածվեց հանրության մեջ։ Բերենք մի բնորոշ փաստ. իբր միայն Հ. Սուրխաթյանին քննադատելու համար, որի միջնորդությամբ էր Ալ. Մյասնիկյանը կազմակերպել Չարենցի արտասահմանյան ուղեւորությունը, Ն. Դաբադյանը գրել է. «Սուրխաթյանը կոմունիստական կարմիր դրոշակի կարմիր կտորով փաթաթում էր որպես գրական կոնդրաբանդա է անցկացնում Չարենցի նացիոնալիստական-հակահեղափոխական գրվածքը՝ «Ես իմ անուշ Հայաստանին» (այս մասին հանգամանորեն տե՛ս մեր Գրական հանգրվաններ, գիրք Ա, Եր. 2003, «Պոեզիան ժամանակի հանգույցներում եւ քննադատի տեսադաշտում» ուսումնասիրությունը)։

Ահա այս բանաստեղծությունն է Հռոմում խոր ներշնչանքով արտասանել Վ. Նավասարդյանը միակ ունկնդրի՝ հեղինակի՝ Եղիշե Չարենցի ներկայությամբ։ Ներ-

շնչանքի աղբյուրը ոչ միայն հեղինակ Չարենցի ներկայությունն էր, այլեւ այն, որ երկուսով, «հավերժական քաղաք» Հռոմի փողոցներում համարքայլ շրջելով, երբեմն ամենատարբեր թեմաների շուրջ գրուցելով, կտրել էին հնության հուշարձաններով ու այլ շքեղություններով ճոխացած Հռոմի փողոցները եւ մասնավոր շքեղագույն **Via Imperia** պողոտայի պատերից մեկին նրանք տեսել էին ֆոշական իշխանության ժամանակներում պատրաստված երեք հսկա բարձրաքանդակ քարտեզ։ «Նրանցից առաջինը,- գրել է Վ. Նավասարդյանը,- ներկայացնում էր աշխարհը Հռոմի հիմնադրման թվականին, այսինքն՝ մեր թվականությունից 753 տարի առաջ։

Այդ քարտեզի վրա՝ Փոքր Ասիայի մեջ, շքեղորեն փռված էր անմեկնելի խորհուրդներով լի մեր աննման հայրենիքը-Հայաստան։

Ուրիշ ազգեր՝ թուրք, վրացի, արաբ եւ այլն, չկային։

Պահը, վայրը, մեր թվականությունից շուրջ ութ դար առաջ ապրող քարտեզն էր երբեմն աշխարհին տիրակալած Հռոմի մեկ պատմական պատիւն, եւ իր իսկ՝ խելագարված ամբոխների երիտասարդ հզոր երգչի ներկայությունը. այս ամենը ինձ տրամադրեցին Չարենցի շքեղ երգը՝ «Ես իմ անուշ Հայաստանին», քաղցրությամբ եւ լի հոգիով արտասանելու։ Հայրենասիրական մեկ խոր ու խորհրդավոր զգացման մեջ միացած եւ մեր աչքերը հառած այն Հայաստանին, որ ապրում էր մեզանից շուրջ 2700 տարի առաջ՝ ես արտասանում էի «Չարենց»-ը, իսկ Չարենցն էլ լուռ ունկնդրում էր ինձ» (էջ 41-42, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Անշուշտ, կարելու է նաեւ, թե ինչպես է բոլշևիկ Չարենցն ընկալել եւ ընդունել իր բանաստեղծության՝ դաշնակցական Վ. Նավասարդյանի արտասանությունը։ Միակ վկան նույն Նավասարդյանն է, որի արժանահավատ խոսքն ունի հատուկ կարեւորություն։ Արդեն վերի քաղվածքում ասվեց, որ թանգարանում միակ ներկա Չարենցը լուռ ունկնդրել է իր բանաստեղծությունը։ Իր խոսքի շարունակության մեջ Վ. Նավասարդյանը գրել է.

«Բանաստեղծն անակնկալի չեկավ, որեւէ բառով չընդմիջեց արտասանությունս, սակայն երբ ավարտեցի, դարձավ ինձ եւ մեղմ տոնով ասաց.

- Եթե իմանայի, թե դուք այդքան շատ պիտի սիրեք այդ կտորը, այն չէի գրի։

- Ի՞նչ, չէի՞ք գրի, լո՛ւրջ եք ասում դուք այդ, իսկապե՞ս որ չէիք գրի,- անկեղծ վրդովմով ասի իրեն։

Չարենցը չպատասխանեց։ Հարցումներս ինքնին նորեն կրկնվեցին. տեսնելով, որ պատասխանի եմ սպասում, Չարենցը դարձավ ինձ եւ ավելի քաղցր ու մտերմիկ շունչով ասավ.

- Ո՛չ, կգրեի, բայց չէի հրապարակի...» (էջ 41- 42, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Ինչպես նկատելի է վերոբերյալից, չնայած «մտերմիկ շունչին»՝ երկու գրուցակիցների միջեւ կատարյալ համերաշխություն ու վստահություն դեռեւս չկար։ Բոլշևիկ Չարենցի մեջ դեռեւս առկա է հակառակության ոգին, եւ նա անվստահություն ունի դաշնակցական գործչի նկատմամբ։ Իր հերթին՝ դաշնակցական Վ. Նավասարդյանն էլ, բոլշևիկ Չարենցի ազնվության ու անկեղծության բարձր գնահատումով հանդերձ, նրա հանդեպ կասկածներից չէր ձեռքազատվել։ Նրանք Հռոմի ազգային թանգարանում ու կենտրոնական փողոցներում մի քանի օր գրուցել էին տարբեր թեմաների շուրջ՝ գերագնացապես քաղաքական։

Հրատարակված պատմվածքում, մանավանդ նրա շարունակության մեջ, Նավասարդյանի ասելով, Չարենցը ներկայացրել է իրենց ընդարձակ քաղաքական գրույցի մի մասը միայն։ Եվ խոստովանելով հանդերձ, թե «**խորքին մեջ անճիշտ խոսք չունի Չարենցը** մեր գրույցի նաեւ այն մասի մեջ, որ հրատարակության տված է», գրել է նաեւ. «Ես չեմ կարծում, թե **այդ գրույցից որեւէ բան թաքցրած լինի իր իշխանավորներից։**

Եվ պատճառ չունեի այդպես անելու, **լիապես համոզված եմ, որ առանձին գրությամբ իր անխաղախ ձեւի մեջ հանձնած է ուր որ հարկն է»** (էջ 31, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱՂՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՐԿՐԻ ԱՇԽԱՐԻՈՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 3

Միակ բանը, ինչ նա թողեց, տարագրի ժառանգությունն էր. «Իհարկե, այդ ժառանգությունը նա չէր ստեղծել, բայց նա մեծ լավություն էր արել ինձ՝ պահպանելով այդ ժառանգությունը։ Վերջինս կապված էր ձախողմաների, կորուստների եւ վախճանի հետ» (տե՛ս W. Saroyan, Here Comes, There Goes, You Know Who, New York: Simon and Schuster, 1961, էջ 3)։ Որդու համար ջանասիրաբար գրված նոթատետրերը դառնում են ոչ միայն անուրախի հավերժությունը որսալու մեկ մարդու տենչանքի խորհրդանշան, այլեւ իր կյանքի դառնաբաղդրավուն ճշմարտությունը չըմբռնելու խորհրդանշի։ Մինչդեռ այլ տեսանկյունով՝ ազգային պատմության մեջ եղած դրվագները կարծես անցյալի վերջաբաններ լինեին, վաղաժամ ընդհատված կյանքերի ուղերձներ, որոնք վկայում էին այն դառն ճակատագրի մասին, որը մի ողջ մշակույթ էր ոչնչացրել։ Միջին դարերում ապրած վանա-

կանների պես, որոնք հույս էին փայփայում, թե որեւէ մեկը կվերհիշի անցյալի ուղերձները, գրողի հայրը, իբրեւ առանձնահատուկ բարեհաճություն, գրել էր ձախողումների, կորուստների ու մահվան մասին։

Վիլյամ Սարոյանի հոր նոթատետրերը տարբեր եղանակներով երեւան են գալիս նրա գրվածքներում։ Գրողն իր հոր գրառումներն օգտագործել էր որպես գաղափարների աղբյուր՝ իր պատմվածքների եւ կարճ գրառումների համար, որոնք նրան անհրաժեշտ ուժ եւ իրատեսություն էին ներշնչում (տե՛ս W. Saroyan, նույն տեղում, էջ 208)։ Մենք նմանապես գտնում ենք այդ նոթատետրերի «հետքերը» Վիլյամ Սարոյանի «Ռոք Վահրամ» ինքնակենսագրականում, որտեղ Ռոքն իր հոր բանաստեղծությունը տալիս է մի քահանայի, որպեսզի վերջինս վերծանի այն։ Գրողի հիշատակված ստեղծագործությունը լի է հղումներով Բիթլիսի (Բիթլիս - Սարոյանների տոհմի բնակա-

տեղին) եւ անխուսափելի մահվան մասին։ Սարոյանի երկի հերոսի հոր բանաստեղծությունը հանդիսանում է նրա վերջնախոսքը։ Ռոքի հայրն այստեղ վերածվում է բացարձակ, բայց բարեբար իշխանության մարմնավորման։ Այդ իշխանության ազդեցությունը համընդհանուր հիշողության վրա երաշխավորեց ազգային մշակույթի հարատեւումը։ Չարագնեցնելով այս գաղափարը՝ Ռոքն ասում է իր հրեա տնօրենին, թե ի՞նչ ընդհանուր բան կա հրեաների եւ հայերի միջեւ. «Մենք ունենք ընդհանուր հայրեր։ Մենք ինքներս հայրեր ենք մեր ծննդյան րուպից։ Մենք ավելի արագ ենք դադարում լինել որդիներ, քան աշխարհի ուրեւէ այլ ժողովուրդ։ Ասվածը վերաբերում է նաեւ մեր որդիներին։ Մենք շտկում ենք մեր հայրերի սխալները, իսկ մեր որդիները շտկում են մեր սխալները։ Ահա թե ինչո՛ւ ենք մենք այսքան խելացի։ ... Մենք ծնված օրվանից հայրեր ենք, քանզի մենք ուզում ենք շրջապատված լինել



բավականաչափ թվով ազգականներով, որպեսզի կարողանանք դիմակայել աղետներին» (տե՛ս W. Saroyan, Rock Wagram, New York: Doubleday and Company, 1951, էջ 154)։

Մի մակարդակում ամերիկահայ գրողի նմանօրինակ մեկնաբանությունները վերաուղղորդում են մեր ուշադրությունը դեպի Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած արյունահեղությունները։ Դրանցից հետո երբեմն անհրաժեշտություն էր առաջանում, որ հայ երեխան որ-

դեգրեր մի ողջ մշակույթ։ Առավել անձնական հարթության վրա հեղինակային մեկնաբանությունները հուշում են այն մասին, թե որքան լավ էր Սարոյանը յուրացրել գերակայության իր դերը, ինչպես նաեւ այն պատկերը, որը նրան լարվածության մեջ էր պահում հուզական եւ հոգեբանական առումներով։ Սփյուռքահայ արվեստագետը ներկայացնում է այդ լարվածության բեւեռները իր գրական գործունեության տարբեր փուլերում։

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 7

Ամերիկահայ գրողի երկերում՝ մասնավորապես «Իմ անունն Արամ է» պատմածաշարում, առկա են գրոտեսկային իրավիճակներ եւ տրամադրություններ, որոնք զվարճացնում են թե՛ հայերին եւ թե՛ օտարներին: Այդ ստեղծագործություններն իրապես անհերքելիորեն գրավիչ են: Հիշատակված ստեղծագործական շարքը նվիրված է Ղարոջանյանների ընտանիքին: Դրանցում հեղինակը գրում է մրգատու այգիների եւ Սան Հոակին գետի հովտի ոռոգման ջրանցքների մասին՝ ջանալով շեղել ընթերցողների ուշադրությունն իր ազգի տարօրինակություններից:

«Իմ անունն Արամ է» պատմածաշարում պատկերված Ֆրեզկոն կարծես մի դրախտ լինի, որտեղ «պահապան հրեշտակները տրվում են իրենց քմահաճույքներին»: Այդ հրեշտակները կարծես ազատություն են պարգևում արվեստագետի երեակայությանը:

Վերը նշված պատմածաշարի առավել ուշագրավ գործերից է «Գնացքաբարձ 38, Օջիբվեյը» պատմվածքը, որում ասվում է, թե ինչպես է հնդկացի Օջիբվեյը մի նոր ավտոմեքենա գնում Արամի համար, որպեսզի նա կարողանա գնալ Մենդոթա՝ ձկնորսություն անելու: Սարոյանը պատկերում է մի աշխարհ, որտեղ մարդկային տենչանքն ունակ է հրաշքներ գործելու, ինչպես օրինակ այն, որ Արամը բնագործար ամբողջ ամառը հնդկացի Օջիբվեյին ծառայում է որպես վարորդ: Նույնիսկ երբ արտաքին աշխարհը ցրում է ստեղծագործական գործունեության եւ նվաճման պատրանքը, միեւնույն է, գրողն իր պատմվածքներում շարունակում է փառաբանել «գեղեցիկը կյանքի անապատի մեջ ներմուծելու տենչանքը», ինչպես օրինակ՝ «Նոնեմինները» պատմվածքում, կամ թակարդային հաստատություններից խուսափելու ցանկությունը, ինչպես «Կրկեսը» պատմվածքում:

Վիլյամ Սարոյանի ստեղծագործություններում արտաքուստ իշխում է բարձր տրամադրությունը, սակայն երբեմն երեւան է գալիս տարագիրների իրական վի-

ՎԻՆՅԱՆ ԱՄՐՈՅԱՆԻ ԵՐԿՐԻ ԱՇԽԱՐԻՆԵՐԸ



ճակը, եւ ընթերցողը պատկերացում է կազմում Ֆրեզկոյի հովտում ապրող հայերի եւ էթնիկ այլ խմբերի ծանր կյանքի մասին: Նման դժվարին պահերին էթնիկ կապերը ոչ միայն հանգստություն են պարգևում միայնակ մարդկանց, այլեւ առավել շոշափելի օգուտ են բերում նրանց: Սրանում կարելի է համոզվել Սարոյանի «Խեղճ, այրվող արաբը» պատմվածքն ընթերցելիս: Վերջինիս հերոսները՝ քեռի Խոսրովը եւ մի վշտահար փախստական անխոս հասկանում են մեկմեկու: Զաջ գիտակցելով, որ ռացիոնալ խոսքը կարող է աղճատել հոգեկան տառապանքի իրական բնույթը, քեռի Խոսրովի արձագանքը որեւէ աղետի ժամանակ կարելի է արտահայտել հայտնի հայկական ասացվածքով. «Վնաս չկա, բանի տեղ մի՛ դիր»:

Այլ գրվածքներում՝ հատկապես ինքնակենսագրականներում, ինչպես օրինակ՝ «Այստեղ է գալիս, այնտեղ է գնում, դու էլ

գիտես, թե ով» երկում Սարոյանը պատկերում է իր ընտանիքը եւ վերջինիս սովորություններն առավել գունագեղ ու պատկերավոր ձևով: Գրողը նկարագրում է իդեալական ընթերցող, որը կազմակերպվել էր ամառային երեկոներից մեկին: Դա իսկական գյուղական ճաշկերույթ էր. «...թարմ խաղող, տափակ հաց, սպիտակ պանիր, դաղձ, քաղցր պղպեղ, կանաչ տխ, լոլիկ, վարունգ եւ սառնորակ ջուր» (տե՛ս W. Saroyan, Here Comes, There Goes, You Know Who, New York: Simon and Shuster, 1961, էջ 103): Այնուհետեւ նշված գրվածքի հերոսը մտնում է հայկական անկողնու մեջ եւ գովերգում է դրա հարմարավետությունը. «...բուրդը բերված էր հին աշխարհից, այն ճիպտված էր արեւի տակ եւ կարված էր հաստ վերմակների մեջ» (տե՛ս W. Saroyan, Նույն տեղում, էջ 90):

Երբեմն Սարոյանն ուրվագծում է տարագիրների յուրահատուկ վարքագիծը,

ինչպես օրինակ այն դրվագում, որտեղ նա նկարագրում է, թե ինչպես է իր տատը լողացնում իրեն: Դա մի իրադարձություն էր, որն անսասն զգացմունքներ էր առաջացնում: Տատիկի գործողությունների ռիթմը, նրա խոսքի կանգառները, նրա կոպիտ համեստությունը, հաճելի բնաձայնությունները, որոնք նման էին մկրտության օրհնանքների. այս ամենը նրան նույնացնում է տարագիր «Բառավի» հետ: Թոռը, ոգեշնչվելով իր տատի խիզախությունից, սիրահարվում է նրա լեզվին եւ բառերն օգտագործում է ինչ-որ բան հայտնագործելու եւ ճոխացնելու կամ էլ արտահայտվելու ու իր անհնազանդությունը դրսևորելու համար:

Գրողը փառաբանում է այն, ինչ փոքր է, սահմանափակ ու յուրահատուկ եւ ներկայացնում է այդ սերը ողորկ ու գերընդհանրացնող արձակով. «Եվ հայկական շարժ ու ձեւերը, որոնք այդքան շատ բան են նշանակում, ծնկով հարվածը եւ ծիծաղի պայթյունը, հայիոյանքը, աշխարհի սուր հեգնանքը եւ դրա մեծ գաղափարները: Հայերեն բառը, հպանցիկ հայացքը, ժպիտը եւ ազգի սրընթաց վերածնունդը հավերժ են եւ գորավոր: Տարիներ են անցել, քաղաքներ են ոչնչացել, սպանվել են հայրեր, եղբայրներ ու որդիներ, մոռացվել են տեղանքներ, երազանքներ են պղծվել, իսկ ապրող սրտերը լցվել են ատելությամբ» (տե՛ս Saroyan W., «The Armenian and the Armenian» in the Saroyan special, էջ 128): Ահա այսպիսի մռայլ երանգներով է ամերիկահայ գրողը ներկայացնում իր ազգի անցյալը: Իսկ ինչպե՞ս է նա ներկայացնում հայ ժողովրդի՝ մասնավորապես ամերիկահայերի վիճակը եւ ամերիկյան հասարակության վերաբերմունքը նրանց հանդեպ: Ինչպես պարզվում է, իրականությունն առանձնապես մեծ լավատեսություն չի ներշնչում: Ֆրեզկոյաբնակ հայերը մյուս ազգային փոքրամասնությունների պես նախապաշարմունքների գոհ էին դարձել:

Շարունակելի

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 6

Սա թեւեւ պաշտոնական, գուցե ոչ լիարժեք ու ճշգրիտ ախտորոշում է, բայց հուշում է, որ Չարենցի հոգեվիճակն ուղեկցվել է տրամադրության տատանումներով՝ ե՛ւ ինքնամփոփվածությամբ, ե՛ւ զգայալիկությամբ: Դա պայմանավորված էր սկզբում միայն խմիչքի, այնուհետեւ նաեւ՝ թմրադեղերի ներգործությամբ: Երբեք չպետք է մոռանալ, որ այս տարիներին Չարենցն անմաքուր կախվածություն ուներ թմրադեղերից:

Եզրակացության մեջ բժիշկների հանձնաժողովն ավելացնում է, որ Չարենցը կրակել է «ախտաբանական հարբածության վիճակում» անձի կառուցվածքային փոփոխության պատճառով եւ, հետեւաբար, նա այդ ժամանակ եղել է անմեղսունակ: Համանման միջադեպերի կրկնությունը նրա հետ անկասկած հնարավոր է հարբեցողության շարունակման դեպքում:

Սեռական խեղումների մասին հնարավոր չէ պատասխան տալ՝ տեղեկություններ չունենալու պատճառով, քանի որ քննվողը հրաժարվել է պատասխանել այդ բնույթի հարցերին» (նույն տեղը):

Իր սեռական բնույթի տարատեսակ գրանցումների մասին Արուս Ոսկանյանին նվիրված հիշյալ տողերում Չարենցը որոշա-



կի հայտարարեց, որ դա կատակ է, եւ ապագա սերունդներն այդ մասին տարակարծություններ կունենան:

Այս առումով հստակեցնելը կենսագրական մի փաստ: Հայտնի է, որ Չարենցը մտերիմ էր Ռեգինա Ղազարյանի հետ: Ծանոթությունը կատարվել է 1930-ի ամռանը, երբ Ռ. Ղազարյանը 15 տարեկան էր եւ զբաղվում էր հեծանվային մարզաձեւով: Չարենցը նրան հրավիրել է իր տուն, իր հետ տարել զբոսանքների, հյուրասիրությունների, երեք օր նրա հետ շրջագայել Գյումրիում, նրա համար գնել գերմանական «Դուքս» մակնիշի հեծանիվ: Նրանց մտերմությունը եղել է նաեւ ինտիմ: Նեղ շրջանակներին

րի հետ՝ առարկայականությունից մինչեւ երեակայություն: Ինքը՝ Ռեգինա Ղազարյանը, Էնթյամբ լինելով շատ խոհեմ, շատ կշռադատված եւ զուսպ անձնավորություն, շատ Նեղ շրջանակներում երբեմն խոսում էր այդ մասին՝ վստահելով իր անձնական կյանքի գաղտնիքներն այնքանով, որքանով կապված են Չարենցի պես խելագար հանճարի հետ եւ լույս կարող են սփռել նրա մարդկային ու գրական կերպարի վրա:

Չարենցի մասին հուշերում նա գրում է. «Նա այնքան էլ չհավանելով Ռեգինա՝ իմ ոչ այնքան խրոխտ անունը, իր մեծ ու խորունկ աչքերով ինձ մի շտապ շեղ հայացք նետելուց հետո՝ բոլորի մոտ հայտարարեց, որ ինքը այնուհետեւ ինձ Ռոլան է կոչելու, եւ որ ես իր փոքր ու մտերիմ բարեկամը պիտի լինեմ»:

Այդպես էլ եղավ: Նրա այդ կողմնորոշումը լիովին իրականություն դարձավ եւ որոշ ընդմիջումներով շարունակվեց մինչեւ վերջ» (Չարենցի հետ: Հուշեր, 1997, էջ 340-341):

Այստեղ շատ բան է ասված: Նույն կերպ շատ բան է ասված նրա հուշերի առանձին արտահայտություններում. «Անգամ ինձ նա չէր գլանում խոստովանել իր մեծ ցանկությունը. ամուսնանալու՝ հատկապես երեխաներ ունենալու համար (նույն տե-

ղը, էջ 348): Ինչո՞ւ՝ «Անգամ ինձ»: Այդպես կարող է գրել միայն սերունդ կապվածություն ունեցող անձնավորությունը: Իր՝ Ռ. Ղազարյանի Չարենցով տարվածության մասին են խոսում այս տողերը. «Այդ օրվանից [ծանոթությունից հետո] Չարենցը դարձավ իմ կուռքը, իմ անկաշառ պաշտամունքը եւ, մոռանալով ամեն ինչ ու ամենքին, օր չէր անցնում, որ չայցեղեի, նրա ուղեկիցը չլիսեի տարբեր իրավերների եւ զբոսաշրջումների ժամանակ» (նույն տեղը, էջ 342):

Անցնելը գրքում զետեղված մյուս գործերին:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 1.12.2017 թ..

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ